տոյ գրեց արքեպիսկոպոսը Ց. Լ. Լազարևին, թէ «սա էլ, եղբայրն էլ փափագում են, որ մենք ուղեկցենք արչաւանքին մեր ազգի քաջալերութեան և օգտի համար: Մենք անկարող էինք մերժել և մեր տկարացած մարմինը խնայել, և կարծում ենք, թէ այս գործի վերջը Աստուծու ողորմութեամբ օգնութիւն և ապահովութիւն կը լինի մեր ազգին»:

Վ. Ա. Զուբով կոմսը 26 հոկտեմբերի 1796 ամի գրով խնդրում է Ցովսէփ սրբազանին գնալ միանալ Գեներալ Մայոր Ա. Մ. Բիմսկիյ-Կորսակովի բանակին՝ «որպէս Քրիստոսի միակ հօտը հովուող բարի հովուապետ և հայցել յօգուտ քրիստոնէութեան Արարատեան հայրապետի սուրբ օրհնութիւնը մեր ապագայ գործերի վրայ, հայրապետի, որին ես ուղղած եմ մի առանձին գրութիւն և յանձնած նոյն իսկ Գեներալ-Մայոր Կորսակովին՝ Նորին Սրբութեան հասցնելու համար»:

Դժուար գործ յանձնուեցաւ սրբազանին. Վ. Ա. Զուբով կոմսը, չնայելով իւր ջերմ ցանկութեան չուտով ազատելու քրիստոնեաներին, ստիպուած էր սակայն անտարբեր երևալ նրանց, որպէս զի մահմեդական ժողովրդին կասկածանքի տեղիք չտայ: Բայց որովհետև այդ ընթացքը քրիստոնեաների նկատմամբ կարող էր խախտել նրանց վստահութիւնն և Ռուսիայի վրայ գրած յոյսերը, ուստի և նրանց հաւատը դէպի Ռուսաց կառավարութեան խոստումները վառ պահելու պաշտօնը սրբազանին յանձնեցին: Վ. Զուբով կոմսը գրում էր Բիմսկիյ-Կորսակով զօրավարին. «փութացէք Ցովսէփ արքեպիսկոպոսի միջնորդութեամբ հաստատուն պահել Արարատեան Հայրապետին առ մեզ ցոյց տուած անձնուիրութեան մէջ»:

Ցովսէփ սրբազանը շատ գործունեայ հանդիսացաւ. նա յորդորում էր համբերել Ագա Մահմէդ խանի իշխանութեան տակ մնալու պատրաստ վրայ Իրակլ թագաւորին՝ Ռուսաց օգնութեան յոյս տալով նրան. յորդորում էր և խաներին աջակից լինել ռուսաց զօրքին, երդմամբ վստահացնելով, թէ Ռուսաստանի կողմից ոչ մի զրկանք չի հասնիլ նրանց. անձամբ միջոցներ էր մտածում ռուսաց զօրքին պարէն և պաշար, նոյն իսկ հզներ հասցնելու համար. հովուական թղթեր էր գրում Պարսկաստանի հայերին՝ «կրկնապատկել իրենց անձնուիրութիւնը դէպի Կայսերական գահն» և այլն:

«Անկարող եմ բաւական շնորհակալութիւն յայտնել Ձերդ սրբազնութեան մեր մեծ ջանքերի համար, որ գործ էք

Հայ մատենագրութեան թուանշային գրադարան